ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 06.05.2013թ.

Ո Ր Ո Շ Ու Մ

ԳԲԽ-25/13 բողոքը քննող հանձնաժողովի

ԳԲԽ-25/13 բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով գնումների բողոքարկման խորհրդի անունից, քննելով «Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի կողմից 15.04.2013թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը, ինչպես նաև ուսումնասիրելով ԳԲԽ-25/13 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված եզրակացությունը պարզեց.

1. <u>«Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքով «Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարությունը համապատասխան հանդերձանք ձեռք բերելու նպատակով կազմակերպել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/10 - ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/42» ծածկագրով ընթացակարգ և հրավեր է ուղարկել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/10» ծածկագրով գրանցված բոլոր հնարավոր մասնակիցներին:

Նշված ընթացակարգին մասնակցել և մի շարք չափաբաժիններով ընտրված մասնակից է ճանաչվել «Անգել» ՍՊԸ-ն:

«Քանաքեռի կարի ֆաբրիկան» ՍՊԸ-ն հայտնել է, որ Հայաստանի Հանրապետության հարկային ծառայության պաշտոնական կայքից ներբեռնված տվյալների համաձայն, «Անգել» ՍՊԸ-ն՝ ՀՎՀՀ՝ 00881766, իրավաբանական հասցեն՝ ք.Երևան, Քուչակ թաղ., 16/2 շ., ՀՀ հարկ վճարողների համակարգում գրանցվել (հաշվառվել) է ս.թ փետրվարի 21-ին, իսկ վերջինիս կարգավիճակը համաձայն նույն կայքից վերցված տվյալների համարվում է նոր գրանցված:

ՀՀ կառավարության 10.02.2011թ N 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 101-րդ կետով սահմանված է, որ գնումների հայտարարության և հրավերի հրապարակումից հետո, գնման գործընթացին մասնակցելու ցանկություն ունեցող անձը, որպես հնարավոր մասնակից գրանցվելու նպատակով, Գնումների աջակցման կենտրոն է ներկայացնում գրանցման հայտ, որը ներառում է՝

1) գրավոր դիմում՝ հասցեագրված Գնումների աջակցման կենտրոնի ղեկավարին,

2) մասնակցի կողմից հաստատված գրավոր հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին,

3) հրավերով սահմանված՝ որակավորման չափանիշներին իր հատկանիշների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթեր,

4) հայտի ապահովում՝ տուժանքի ձևով, որի չափը հավասար է գնումների բազային միավորին:

Այսինքն վերջինիս կողմից «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/10» ծածկագրով ընթացակարգին որպես հնարավոր մասնակից գրանցվելու նպատակով հավելված N 3-ով ներկայացված Ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման պահանջներին համապատասխանության մասին հայտարարությունը չի համապատասխանում ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 101-րդ կետով սահմանված պահանջներին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված է, որ Մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը

2) մասնագիտական փորձառություն

3) տեխնիկական միջոցներ

4) ֆինանսական միջոցներ

5) աշխատանքային ռեսուրսներ:

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/10» ծածկագրով հրավերի 2.2 կետով սահմանված է, որ Մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը

2) մասնագիտական փորձառություն

3) տեխնիկական միջոցներ

4) ֆինանսական միջոցներ

5) աշխատանքային ռեսուրսներ:

«Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն գտնում է, որ «Անգել» ՍՊԸ-ն չի համապատասխանում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված չափանիշներին:

Հաշվի առնելով վերը նշված հանգամանքները, ընկերությունը խնդրել է դադարեցնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/42» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի «Անգել» ՍՊԸ-ին տարբեր չափաբաժիններով ընտրված մասնակից ճանաչելու համապատասխան որոշումները:

2. **<u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները</u>**.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 18.04.2013թ. N 04/032-619 գրությամբ դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանը՝ խնդրելով կարծիք տալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 15.04.2013թ. «Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ:

ՀՀ պաշտպանության նախարարությունը 26.04.2013թ. N ԴՎԱ/1245 գրությամբ Կենտրոնին է ներկայացրել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/10 – ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/42» ծածկագրով գնման ընթացակարգին վերաբերող փաստաթղթեր և «Անգել» ՍՊԸ-ի հայտի պատճենները, իսկ բողոքի վերաբերյալ որևէ կարծիք չի հայտնել:

3. ԳԲԽ-25/13 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը հանձնաժողովին ներկայացրել է իր եզրակացությունը և առաջարկել է «Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի կողմից 15.04.2013թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը մերժել:

4. ԳԲԽ-25/13 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը, ԳԲԽ-25/13 բողոքը քննող հանձնաժողովի հիմնավորումները և եզրահանգումները.

Հանձնաժողովն ուսումնասիրել է «Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի (այսուհետև՝ նաև Ընկերություն) կողմից 15.04.2013թ. ներկայացված բողոքը, «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/10» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 03.05.2013թ. N 4-1/4949-13 գրությունը, «Անգել» ՍՊԸ-ի 03.05.2013թ. գրությունը և գրությամբ ներկայացված փաստաթղթերը, «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի եզրակացությունը:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հանդերձանքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/42» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետև՝ նաև Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով ի թիվս այլ ընկերությունների մասնակցության հայտ են ներկայացրել «Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն և «Անգել» ՍՊԸ-ն:

«Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն Կենտրոնին ներկայացված բողոքով հայտնել է, որ Ընթացակարգին մասնակցած և մի շարք չափաբաժիններով որպես ընտրված մասնակից ճանաչված «Անգել» ՍՊԸ-ն Հայաստանի Հանրապետության հարկային ծառայության պաշտոնական կայքից ներբեռնված տվյալների համաձայն ՀՀ հարկ վճարողների համակարգում գրանցվել (հաշվառվել) է ս.թ փետրվարի 21-ին, իսկ վերջինիս կարգավիճակը համաձայն նույն կայքից վերցված տվյալների համարվում է նոր գրանցված՝

այսինքն վերջինիս կողմից «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/10» ծածկագրով ընթացակարգին որպես հնարավոր մասնակից գրանցվելու նպատակով ներկայացված ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման պահանջներին համապատասխանության մասին հայտարարությունը չի համապատասխանում ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 101-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված պահանջներին, ինչպես նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված չափանիշներին:

Կենտրոնը 25.04.2013թ. N 05/032-648 գրությամբ դիմել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեին՝ խնդրելով Կենտրոնին ներկայացնել «Անգել» ՍՊԸ-ի ՀՀ հարկ վճարողների համակարգում գրանցվելու սկզբնաժամկետի և տնտեսական գործունեության վերաբերյալ տեղեկություններ:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 03.05.2013թ. Կենտրոնին ներկայացված N 4-1/4949-13 գրությամբ տեղեկացրել է, որ «Անգել» (ՀՎՀՀ 00881766) ՍՊԸ-ն պետական գրանցում է ստացել 21.02.2013թ. և 21.04.2013թ. ՀՀ ԿԱ ՊԵԿ Նոր Նորքի ՀՏ ներկայացրած հաշվարկների համաձայն ընկերությունը ունի 6 աշխատող, ինչպես նաև 2013թ. 1-ին եռամսյակում արտադրական գործունեությունից ստացված եկամուտները կազմել են 3.576.6 հազար դրամ:

Կենտրոնը 25.04.2013թ. N 09/032-649 գրությամբ դիմել է «Անգել» ՍՊԸ-ին՝ առաջարկելով կարծիք տալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 15.04.2013թ. «Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ:

Կենտրոնում ս.թ. մայիսի 3-ին ԳԲԽ 25/13 բողոքի շրջանակներում կազմակերպված բանավոր լսումների ընթացքում «Անգել» ՍՊԸ-ի ներկայացուցիչը հանձնաժողովին ներկայացրեց 03.05.2013թ. գրությունը, որով հայտնել է, որ «Անգել» ՍՊԸ-ն ստացել է պետական գրանցում և 21.02.2013թ. գրանցվել է Նոր Նորքի հարկային տեսչությունում: Նախապես ունենալով որոշ կազմակերպությունների հետ նախնական համաձայնություններ՝ ընկերությունը պետական գրանցում ստանալուց հետո ի դեմս ընկերության տնօրենի ս.թ. փետրվարի 22-ից 26-ը կնքել է մի քանի արտադրանքների մատակարարման պայմանագրեր:

«Անգել» ՍՊԸ-ն հայտնել է, որ ընկերությունն ունի երկարաժամկետ վարձակալած աշխատանքային տարածքներ, արտադրական գույք և միջոցներ: Ընկերությունում աշխատանքի են անցել տարիների փորձ և փորձառություն ունեցող մասնագետներ և վարպետներ: Ելնելով վերը նշված հնարավորություններից «Անգել» ՍՊԸ-ն կարողացել է

սեղմ ժամկետում կատարել իր ստանձնած պայմանագրային պարտավորությունները և գնորդ ընկերություններին տրամադրել պահանջված արտադրատեսակները: Որպես շարադրվածի վկայություն՝ «Անգել» ՍՊԸ-ի կողմից գրությանը կից ներկայացվել է տարածքի և գույքի վարձակալության 21.02.2013թ. կնքված պայմանագրի պատճենը, 23.02.2013թ., 26.02.2013թ. և 27.02.2013թ. կնքված պայմանագրերի և արտադրանքի մատակարարման 25.02.2013թ. N 01, 27.02.2013թ. N 02 և 28.02.2013թ. N 03 հաշիվների պատճենները, ընկերության պետական գրանցման վկայականի պատճենը, Նոր Նորքի հարկային տեսչությանը «Անգել» ՍՊԸ-ի կողմից 1-ին եռամսյակի համար ներկայացված շրջանառության հարկի հաշվարկը: Հանձնաժողովի այն հարցին, թե «Անգել» ՍՊԸ-ն ինչով կարող է հավաստել իր ֆինանսական միջոցների, աշխատանքային ռեսուրսների և տեխնիկական միջոցների չափանիշներին համապատասխանությունը, «Անգել» ՍՊԸ-ի ներկայացուցիչը հայտնեց, որ վերը նշված որոկավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու համար լրացուցիչ ժամանակ է հարկավոր և խնդրեց հնարավորություն ընձեռել հաջորդ նիստի ժամանակ ներկայացնելու պահանջվող փաստաթղթերը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ նաև Օրենք) 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝ մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը, մասնագիտական փորձառություն, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև՝ նաև Կարգ) 101-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ գնումների հայտարարության և հրավերի հրապարակումից հետո, գնման գործընթացին մասնակցելու ցանկություն ունեցող անձը, որպես հնարավոր մասնակից գրանցվելու նպատակով, Գնումների աջակցման կենտրոն է ներկայացնում գրանցման հայտ, որը ներառում է հրավերով սահմանված՝ որակավորման չափանիշներին իր հատկանիշների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթեր:

«Անգել» ՍՊԸ-ն «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/10» ծածկագրով ընթացակարգին որպես հնարավոր մասնակից գրանցվելու նպատակով ս.թ. փետրվարի 26-ին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին է ներկայացրել հրավերի N3 հավելվածով նախատեսված

որակավորման պահանջներին համապատասխանության մասին հայտարարություն, որով հայտնել և հավաստել է, որ «Անգել» ՍՊԸ-ն ունի պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝ մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը, մասնագիտական փորձառություն, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ, որի հիման վրա «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և «Անգել» ՍՊԸ-ի միջև 04.03.2013թ. կնքվել է հանդերձանքի գնման N ՇՀԱՊՁԲ-11/10-148 ծածկագրով շրջանակային համաձայնագիրը:

«Անգել» ՍՊԸ-ն 03.05.2013թ. գրությամբ՝ որպես մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը և մասնագիտական փորձառություն չափանիշների հավաստում Կենտրոնին է ներկայացրել «Անգել» ՍՊԸ-ի և «Մարմոնտաժ» ՍՊԸ-ի միջև 23.02.2013թ. կնքված պայմանագիրը և պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման 25.02.2013թ. կնքված ընդհանուր 1.132.200 ՀՀ դրամ գումարի հանձնման-ընդունման արձանագրությունը, որով N1 չափաբաժնով նախատեսված ապրանքի համար նշվել է անվանումը՝ համազգեստ (կոմբինեզոն), քանակը՝ 12, միավորը՝ հատ, գինը՝ 24.000, գումարը՝ 288.000, իսկ N 2 չափաբաժնով նախատեսված ապրանքի մասով անվանումը՝ բաճկոն, քանակը՝ 21, միավորը՝ 21, գինը՝ 40.200, գումարը՝ 844.200:

Կենտրոնում 2013թ. մայիսի 6-ին հրավիրված ԳԲԽ 25/13 բողոքը քննող հանձնաժողովի նիստի ընթացքում, «Անգել» ՍՊԸ-ի ներկայացուցիչը Հանձնաժողովին.

- որպես ֆինանսական միջոցները հավաստող փաստաթուղթ ներկայացրեց «Բլեսս» ունիվերսալ վարկային կազմակերպության 25.02.2013թ. N ՀՍ-048/1 գրությունը, որի համաձայն «ԲԼԵՍՍ» ՈՒՎԿ ՍՊԸ-ի համապատասխան իրավասու մարմնը 25.02.2013թ. քննարկել և որոշում է կայացրել բավարարել ընկերությանը 3.000.000 ՀՀ դրամի չափով, մինչև 30.12.2013թ. մարման վերջնական ժամկետով, տարեկան 22% տոկոսադրույքով վարկային գիծ բացելու և ընկերության առաջին պահանջով վերը նշված վարկային գծի սահմաններում գումարը ընկերությանը տրամադրելու վերաբերյալ «Անգել» ՍՊԸ-ի հայտը,
- որպես տեխնիկական միջոցները հավաստող փաստաթուղթ ներկայացրեց «Անգել» ՍՊԸ-ի և ՀՀ քաղաքացի Գագիկ Բեգլարի Կոստանդյանի միջև 22.02.2013թ. կնքված տրանսպորտային միջոցների վարձակալության մասին պայմանագիրը,
- որպես աշխատանքային ռեսուրսներ հիմնավարող փաստաթուղթ ներկայացրեց «Անգել» ՍՊԸ-ի և Հասմիկ Ղուկասյանի, Նարինե Մաթևոսյանի, Վալենտինա Մինասյանի,

Աշոտ Գասպարյանի և Սոնյա Դարբինյանի միջև 22.02.2013թ. կնքված աշխատանքային պայմանագրերը:

Գնումների բողոքարկման խորհուրդը գտնում է, որ «Անգել» ՍՊԸ-ի կողմից «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/10» ծածկագրով ընթացակարգին որպես հնարավոր մասնակից գրանցվելու նպատակով «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին Կարգի 101-րդ կետի 3-րդ ենթակետի՝ ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման պահանջներին համապատասխանության մասին 26.02.2013թ. Կենտրոնին ներկայացված հայտարարությունը եղել է հիմնավորված և «Անգել» ՍՊԸ-ն բավարարել է Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և հրավերով սահմանված որակավորման չափանիշներին:

Վերոգրյալի հիման վրա և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 5-րդ մասը գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի կողմից 15.04.2013թ. Կենտրոնին ներկայացված բողոքը մերժել:

Գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

Գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողովի՝

Նախագահ՝ Գոռ Ենոքյան

Անդամ՝ Աշոտ Մարդյան